

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

նոր փոխարժայուրիւմ:—նոր կանոններ դժբախտ դեպքերից վճառուած բանուութերին վարձարեղու մասին:—Թիգլիսի նահանգապետի որոշումը:—Թորայի ծրարների մնացորդների բաղումը:—«ՊրաՎИՏ. ԵՇՏ.» Կիեւի անկարգուրիւնների մասին:—Փոկոյուրիւններ գինահանների միջիացուրեան մէջ:—Կանոններ արժուական հողերի վրայ ապրող գիւղացիների եւ գաղրականների հողացիրուրեան մասին:—Մեռոնի օրինուրիւնը:—Կարգադրուրիւններ մասնուշի վերաբերեալ:

Բարձրագոյն հրամանով յուլիսի 30-ին հեռաւոր Արևելքում կազմուած է առանձին փոխարքայութիւն, որի մէջ մըտնում են Մերձամուրեան (Приамурск.) գեներալ-նահանգապետութիւնը և Կվանտունեան երկիրը: Այդ կարգադրութեան իրքը հիմք են ծառայում այն վիճուորական-քաղաքական նպատակները, որ ունի Ռուսաստանը հեռաւոր Արևելքում, ուր Զինաստանի, ձապոնիայի և Կորէայի հարեւանութիւնը և եւրոպական մեծ պետութիւնների ձգումները բարդ յարաբերութիւններ են ստեղծում: Փոխարքային յանձնուամ է թէ քաղաքացիական կառավարչապետութիւնը, թէ դիպլոմատիկական յարաբերութիւնները հարեւան երկրների հետ, և թէ Խաղաղ Ովկիանոսի նաւատորմղի հրամանատարութիւնը: Հեռաւոր Արևելքի առաջին փոխարքան ամենայն լիազօրութիւններով նշանուակած է աղմիրալ Ալեքսէները:

Այդ առիթով Կառավարիչ Սենատի անունով հրատարակուած է հետեւեալ Բարձրագոյն Անուանական հրամանը, «Կայսրութիւնան արեւելեան ծայրերը կառավարելու բարդ խնդիրները դրդում են Մեզ հոգ տանել կազմելու իշխանութիւն, որի գործունէութեամբ

ապահովուէր այդ երկրի զարգացումը և տեղական կարիքներին անյետաձգելի բաւարարութիւն տալը։ Այդ պատճառով բարիք համարելով Մերձամուրեան նահանգից և Կվանտունեան շրջանից առանձին փոխարքայութիւն կազմելը, հրամայում ենք մեր տեղապահին հեռաւոր Արևելքում 1) իւրացնել իրան հաւատացած երկրի քաղաքացիական կառավարութեան բոլոր մասերի բարձրագոյն իշխանութիւնը, վերցնելով այդպիսին մինիստրութեան իրաւասութիւնից նոյնպէս նրան է յանձնւում բարձրագոյն հոգատարութիւն կարգապահութեան և ապահովութեան մասին այն տեղերի վերաբերմամբ, որոնք գտնուում են չինական արեւելեան երկաթուղու ձեռքուում։ Նոյնպէս մօտակայ հոգատարութիւն ունենալ սահմանին կից ռուս ազգաբնակութեան օգտի և կարիքների մասին։ 2) Մինչեւ հեռաւոր Արևելքի նահանգները կառավարելու մասին օրէնքների հրատարակելը փոխարքայի իրաւոնքների սահմանները որոշել այն գիշաւոր հիմունքներով, որոնք գտնուում են 1845 թ. յունուարի 30-ին Կովկասեան փոխարքայութիւն կազմելիս հրատարակած հրովարտակում։ Փոխարքային ենթարկուած պետական հիմնարկութիւնները և պաշտօնակատար անձերը մինիստրութիւնների հետ յարաբերութիւն են ունենում միայն փոխարքայի միջոցով։ 3) Հեռաւոր Արևելքի փոխարքայի իրաւասութեան տակ կենտրոնացնել այդ նահանգների գործերի վերաբերեալ քաղաքական յարաբերութիւնները հարենան պետութիւնների հետ։ 4) Փոխարքային յանձնել Խաղաղ ովկիանոսում գտնուող բոլոր ծովային ոյժերի և նրան հաւատացած երկրում գտնուած ամբողջ զօրքի հրամանատարութիւնը։ 5) Հեռաւոր Արևելքի գլխաւոր իշխանութեան կարգադրութիւնները ընդհանուր պետական նպատակների և մինիստրների գործունէութեան հետ համաձայնեցնելու համար հիմնել մի առանձին կոմիտեա Մեր նախագահութեամբ և Մեր հաւատով մասնակցութեան հրաւիրուած անձերի անդամակցութեամբ։ 6) Գեներալ-ադիբւտանտ Ալեքսէեւին, որը սրանով նշանակւում է Հեռաւոր Արևելքի փոխարքայ, յանձնել իբրև Մեր ցուցմունքների լրացումն կազմել կանոններ Հեռաւոր Արևելքը կառավարելու մասին և այդ ենթադրութիւնները ներկայացնել Մեր հաստատութեանը։ Կառավարիչ Մենատը տնօրինելու է պատշաճաւոր կարգադրութիւն այս բոլորը իրագործելու համար։ Խակականի վրայ նորին կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրուած է «ՆԻԿՈԼԱՅ»։ Պետերհոփ, 1903 թ. յուլիսի 80-ին։

Հրատարակուած են Բարձրագոյն հաստատուած նոր կանոններ, որոնցով իրաւունք է արևում գործարանական և հանքագործական արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ ծառայող բանուորներին որոշ վարձատրութիւն ստանալ այն դրժագդ դէպերի համար, որոնց զոհ են զառնում նրանք աշխատելու ժամանակի Բանուորներին նոր կանոններով մերժուած է վարձատրութիւն տալ այն ժամանակ, երբ դիբազդ դէպերը առաջանում են բանուորների գիտաւորնեալ չարակամութիւնից կամ կոպիտ անզգուշութիւնից: Գործարանատէրերի կողմից վարձատրութիւնը բանուորներին նշանակուած է որպէս նպաստ և որպէս կենսաթոշակ. նպաստ այն դէպերում, երբ բանուորը ժամանակաւորապէս կորցնում է աշխատելու ընդունակութիւնը, իսկ կենսաթոշակ այն դէպերում, երբ բանուորը ընդ միշա գրկը ուում է աշխատելու ընդունակութիւնից: Եթէ դիբազդ դէպերի հետեանքը եղել է բանուորի մահը, նրա ընտանիքը իրաւունք է ստանում վարձատրութիւն պահանջելու գործարանատիրոջից:

Թիֆլիսի նահանգապետը կայացրել է հետեւեալ որոշումը. «1903 թւականի յուլիսի 26-ին, Թիֆլիսի նահանգապետա, համաձայն Կովկասեան կառավարչապետի՝ Թիֆլիս քաղաքի համար հրատարակած պարտադիր կանոնների, որոշեցի երեք ամսուայ բանտարկութեան ենթարկել հետեւեալ անձերին ստիկանութեան պաշտօնեանների պահանջը՝ վողոցներում համախմբումներ չը կազմել՝ անկատար թողնելու համար.—1) Գոգոլյա Սակատիային, 2) Ղարիբով Գէորգիին, 3) Մին Աւալիհանիին, 4) Գորդիշեւ Դաւթին, 5) Մերաբով Բուղդանին, 6) Մարկարեւ Եանիին, 7) Մարգրաբեան Արշակին: Առաջին երկու անձերի բանտարկութեան սկիզբը պէտք է համարել յուլիսի 24-ի երեկոյեան ժամի 8-ից, իսկ մնացած հինգ հօգունը յուլիսի 25-ի երեկոյեան ժամը 8-ից:

«Правительственныи Вѣстникъ» լրագրում տպագրուած է կառավարչական հետեւեալ հաղորդագրութիւնը. «Յուլիսի 23-ին կիեւի երկաթուղու արհեստանոցների բանուորները ժողովուեցին արհեստանոցներում, բայց գործադրուլի պատճառով ձեռնամուխ չ'եղան աշխատանքների: Այս պահանջով հանապահնի վարչութիւնը կախեց մի յայտարարութիւն, որով հրաւիրում էր աշխատել չը բանկացող բանուորներին հաշիւ

ստանալ: Ճաշի ժամանակ բանուորները ցրուեցին, և արհեստանոցները փակուեցին: Գալով ճաշից յետոյ արհեստանոցները և դանելով նրանց փակուած՝ բանուորները սկսեցին խմբուել երկաթուղիական գծի վրա, որտեղ նրանց միացան բանուօրներ Հարաւային Ռուսական ընկերութեան մերձակայ գործարաններից: Այդ ժամանակ ամբոխը, բազկացած մօտ 2000 հոգուց, բռնեց ճանապարհի ամբողջ լայնութիւնը: Բայց համոզումները՝ հեռանալ ճանապարհից՝ անհետեանք մնացին: Այս պատճառով էլ անհրաժեշտ ճանաչուեց մաքրել ճանապարհը զօրքերի աջակցութեամբ: Այդ բանը սկզբում աջողուեց առանց դիմելու զէնքի օդնութեան, բայց երբ բանուորների մի խմբի միջից սկսեցին զօրքի վրայ քարեր գցել, որոնից վէրքեր ստացան պրիստաւի օգնականը, մի օֆիցիեր և մի քանի զինուորներ, այն ժամանակ անկարգութիւններ անողների վրայ արձակեցին հրացաններ, որոնցով սպանուեցին երկու հոգի, և 27 հոգի էլ վիրաւորուեցին:

Սերգէյ Խւրիեւիչ Վիտոչն 11 տարուայ գործունէութիւնից յետոյ թողնում է ֆինանսների մինիստրի պաշտօնը: Նրա կատարած գլխաւոր գործերն են—ոսկի դրամի շրջանառութիւնը, խմիչքների արքունի վաճառումը, պետական փոխառութիւնների վերածումը  $4\frac{1}{2}$  %— $6\%$  թղթերից  $4\%$  թղթերի. արքունական և մասնաւորնոր երկաթուղների ահազին ցանցի շինութիւնը, զիւղացիների փոխատու պատասխանատուութեան վերացումը. Գերմանիայի հետ առևտրական դաշնագրի կնքումը. վաստուած բանուորներին գործարանատէրերի կողմից բաւարարութիւն տալու մասին օրէնքը. առևտրական-արդիւնաբերական զբաղմունքների վրայ հարկը, բնակարանային պետական հարկը ևայլ:

Վիտոչն նշանակուած է մինիստրի կոմիտետի նախագահ և շարունակելու է գիւղատնտեսական արդիւնաբերական կարիքների քննութեան համար կազմուած Առանձին Խորհրդակցութեան նախագահի պաշտօնը: Նա պէտք է վերջացնի և Գերմանիայի հետ կատարելիք նոր առևտրական դաշնագրի հարցը:

Ֆինանսների մինիստր է նշանակուած Պետական Բանկի կառավարիչ Էդուարդ Դմիտրիեւիչ Պլիսկէ, որ մօտ 52 տարե-իան է:

Բարձրագոյն հաստատուած են՝ այս տարուայ ապրիլի 21-ին Անդրկովկասի (քացի Կարսի և Զաքաթալի շրջաններից) արքունական հողերի վրայ ապրող գիւղացիների և գաղթականների հողատիրական դրութիւնը որոշող կանոններ, որոնց էութեան հետ կ'աշխատենք ծանօթացնել մի այլ անգամ։

Օգոստոսի 24-ին էջմիածնում տեղի ունեցաւ Մեռնի օրհնութիւնը։ Պատարազիչ էր Սեղբակեան արքեպիսկոպոսը։ Վեհափառ կաթողիկոսը 14 եպիսկոպոսների, բազմաթիւ վարդապետների, քահանաների և ուխտաւորների ներկայութեամբ կատարեց Հայատանեայց եկեղեցու այդ ամենավառաւոր արարողութիւնը։

Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ—Վերջերում թոյլ են տրուած մի քանի ոռուսերէն պարերական հըրատարակութիւններ՝ մեծ մասամբ մասնագիտական բովանդակութեամբ։ Այդպէս ակադեմիկոս Բելստերեւին և պրոֆ. Սերեբրեննիկովին «Ենտոնիկ Պսիխոլոգիա, Կրиминальной Аントропологии и Гипнотизма» ամսագիրը, ակադեմիկոս իշխ. Թարխանովին ամեն շաբաթեայ պատկերազարդ «Օхрана Здоровья въ Семье и Обществѣ» հանդէսը։

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ առաջին նախագուշացում է յայտնուած լրագիր-ամսագիր «Гражданинъ»-ին, երրորդ նախագուշացում «Хозяинъ» ամսագրին։

Նոր-նախիջնանցի պ. Յ. Բուլղանեանը թոյլտութիւն էր խնդրել հրատարակելու նոյն քաղաքում «Զրոյց» անունով հայերէն լրագիր։ «Պրիազ. Կրայ» թերթի ասելով՝ մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը յայտնել է խնդրատուին, որ ներքին գործոց մինիստրը հնարաւոր չէ համարել գոհացում տալու նրա խնդրքին։

Յուլիսի 24-ին Բաթումում սպանուեց «Թատրոն» հանդիսի խմբագիր-հրատարակիչ Ալ. Թարխաննեանը։ Լուրերին նայած՝ նրա այրին մտադիր է շարունակել այդ հանդիսի հրատարակութիւնը։

Չորս ամսով դադարեցրուած է «Որալъ» լրագիր և 6 ամսով «Գազվլечենիե» ամսագրի հրատարակութիւնը։

Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատուած կարծի-

քով որոշուած է հիմնել առանձին գրաքննիչների պաշտօններ Խարկով, Ռոստով Դոնի վրայ, Եկատերինոսլաւ, Նիժնի-Նովգորոդ, Սարատով, Տոմսկ և Վլադիվոստոկ: Նոր գրաքննիչները ստանալու են 2 հազ. ր. ոռնիկ և 200 ր. դիւանական ծախքերի համար:

---